ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացվել է ««Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-770-27.10.2020-ՊԻ-011/0) (այսուհետ՝ Նախագիծ), որով առաջարկվում է «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում ռազմական դրություն հայտարարվելու դեպքում կիրառվող միջոցառումների և սահմանափակումների թվում նախատեսել նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց գույքի օգտագործումը: Սահմանվում են նաև գույքն օգտագործման վերցնելու ընթացակարգեր: Նախագծի հիմնավորումներում նշվել է, որ օրենքի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է երկրում ստեղծված իրավիճակում առաջացած խնդիրների առավելագույնս արդյունավետ կերպով հաղթահարմամբ:

Նախագիծը մասնագիտական փորձաքննության է ենթարկվել Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչությունում: Նախագիծը ենթարկվել է ***իրավական, ֆինանսատնտեսագիտական, սոցիալական փորձաքննության:***

Ստորև ներկայացվում են մասնագիտական փորձաքննության եզրակացությունները, ինչպես նաև Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության մասին տեղեկանքը:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՆԻ ՄՈՒԹԱՖՅԱՆ

28.10.2020թ.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

««Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-770-27.10.2020-ՊԻ-011/0) վերաբերյալ

Կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված ««Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ) իրավական փորձաքննության է ենթարկվել Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչության պետաիրավական փորձաքննության բաժնում:

Իրավական փորձաքննության արդյունքները

Օրենքների պահանջներին համապատասխանության տեսանկյունից նշենք հետևյալը.

1. Առաջարկում ենք Նախագծի վերնագրից հանել *«ՀՀ»* հապավումը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասը՝ «*Նորմատիվ իրավական ակտերի վերնագրերում արգելվում է կիրառել հապավումներ կամ բառերի կրճատումներ*» և 18-րդ հոդվածի 3-րդ մասը՝ «*Օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի վերնագիրը, օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, հերթական համարը և «օրենք» բառը: Օրենքի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում նշվում է օրենքի վերնագիրը*»:

2. Նախագծի 2-րդ հոդվածով «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում (այսուհետ՝ Օրենք) լրացվող նոր՝ 8.1-ին հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Առաջարկությունը ներկայացնելիս գույքի օրինական տիրապետողին ներկայացվում է անհրաժեշտ գույքը, գույքի օգտագործման անհրաժեշտության հիմնավորումը (եթե այն գաղտնի չէ), գույքը վերադարձնելու (անհնարինության դեպքում՝ փոխհատուցելու) պետության պարտականությունը, ինչպես նաև նախազգուշացում այն մասին, որ կամավոր չհանձնելու դեպքում գույքը կարող է վերցվել հարկադիր կարգով»:*

Վերոգրյալ իրավակարգավորման վերաբերյալ նշենք հետևյալը.

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 279-րդ հոդվածում սահմանվում են սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների դադարման հիմքերը, 297-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «*Չի թույլատրվում սեփականատիրոջ գույքը հարկադրաբար վերցնել կամ առգրավել, բացի այն դեպքերից, երբ օրենքով նախատեսված հիմքերով՝*

1) պարտավորությունների համար գույքի վրա տարածվում է բռնագանձում (հոդված 281).

2) օտարվում է այն գույքը, որնօրենքիուժովչի կարող պատկանել տվյալ անձին (հոդված 282).

3) սեփականությունն օտարվում է հանրության գերակա շահերի ապահովման նպատակով (հոդված 218).

4) վերցվում են անտնտեսվար պահվող մշակութային արժեքները (հոդված 284).

5) կատարվում է ռեկվիզիցիա (հոդված 285).

6) կատարվում է բռնագրավում (հոդված 288).

7) իրավաբանական անձը դատարանի վճռով վերակազմակերպվում կամ լուծարվում է (63 և 67 հոդվածներ).

8) գույքն օտարվում է՝ սույնօրենսգրքի 197 հոդվածի 4-րդ կետով, 208 և 220 հոդվածներով նախատեսված դեպքերում.

9) կատարվում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձում»:

Նախագծի 2-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր՝ 8.1-ին հոդվածի 3-րդ մասում սահմանվում է, որ կամովին չհանձնելու դեպքում գույքը կարող է վերցվել հարկադիր կարգով: Մինչդեռ, հարկ է նկատել, որՕրենսգրքի 279-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված է սեփականատիրոջ գույքը հարկադրաբար վերցնելու արգելքը և թվարկված են սեփականատիրոջ գույքը հարկադրաբար վերցնելու արգելքից բացառություն նախատեսող դեպքերը, որոնցմեջ նշված չէ ռազամական դրության իրավական ռեժիմի ընթացքում ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից գույքը կամովին չհանձնելու պարագայում, այն հարկադիր կարգով վերցնելու դեպքը՝ որպես սեփականատիրոջ գույքը հարկադրաբար վերցնելու արգելքից բացառություն:

Հետևաբար, կարծում ենք, նման կարգավորման պայմաններում կարող է հակասություն առաջանալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 279-րդ հոդվածի և Նախագծի 2-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր՝ 8.1-ին հոդվածի 3-րդ մասի միջև:Ուստի, առաջարկում ենք, լրացում կատարելՕրենսգրքի 279-րդ հոդվածի 2-րդ մասում՝ նշելով ռազամական դրության իրավական ռեժիմի ընթացքում ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից գույքը կամովին չհանձնելու դեպքերում, այն հարկադիր կարգով վերցնելուօրենքով նախատեսված հիմքը:

3. Նախագծի 2-րդ հոդվածով Օրենքումլրացվողնոր՝ 8.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *«Գույքի օրինական տիրապետողի կողմից համաձայնություն ստանալու դեպքում իրավասու պաշտոնատար անձը կազմում է գույքի կամավոր հանձնման վերաբերյալ արձանագրություն, որըպետք է պարունակի առնվազն հետևյալ տեղեկությունները.*

1) գույքի (այդ թվում՝ դրա վիճակի) հնարավորինս ամբողջական նկարագիրը,

2) համապատասխան մարմնին հանձնելու եղանակը, վայրը և ժամանակը,

3) գույքի օրինական տիրապետողի տվյալները՝ անունը, ազգանունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը,

4) արձանագրությունը կազմողի անունը, ազգանունը և պաշտոնը,

5) նշումներ հոդվածի 16-17-րդ մասերով սահմանված կարգի մասին»:

Վերոնշյալ իրավակարգավորման վերաբերյալ նշենք հետևյալը.

Նախագծի 2-րդ հոդվածով Օրենքում լրացվողնոր՝ 8.1-ին հոդվածի 17-րդ մասի համաձայն՝ «Սույն հոդվածը չի տարածվում սույնօրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի «ժբ», «ժգ» և «ժդ» ենթակետերի հիման վրա տպագրող սարքերի, ռադիոհեռարձակող, ձայնաուժեղացնող տեխնիկական միջոցների, բազմացնող տեխնիկայի, զենքի, զինամթերքի, ռազմամթերքի, թունավոր նյութերի, մարտական ու ուսումնական ռազմական տեխնիկայի, պայթուցիկ և ռադիոակտիվ նյութերի ժամանակավոր առգրավման, տրանսպորտային միջոցների ներգրավման, ինչպես նաև «Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի հիման վրա ռազմատրանսպորտային պարտականություն ունեցող մարմինների տրանսպորտային միջոցների ներգրավման դեպքերի վրա»:

Նախագծի 2-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր՝ 8.1-ին հոդվածի 5-րդ մասի 5-րդ կետի համաձայն գույքի կամավոր հանձնման վերաբերյալ արձանագրության մեջնշում է կատարվում Նախագծի 2-րդ հոդվածով Օրենքում լրացվողնոր՝ 8.1-ին հոդվածի 17-րդ մասում սահմանված կարգի մասին, մինչդեռ, հարկ է նկատել, որ Նախագծի 2-րդ հոդվածով Օրենքում լրացվողնոր՝ 8.1-ին հոդվածի 17-րդ մասում կարգ սահմանված չէ:

Վերոնշյալ դիտարկումը վերաբերելի է նաև Նախագծի 2-րդ հոդվածով Օրենքում լրացվողնոր՝ 8.1-ին հոդվածի 9-րդ մասի 8-րդ և 12-րդ մասի 8-րդ կետերին:

4. Նախագծի 2-րդ հոդվածով Օրենքում լրացվողնոր՝ 8.1-ին հոդվածի 15-րդ մասի համաձայն՝ *«Սույն հոդվածով սահմանված կարգով օգտագործման վերցված գույքը վերադարձվում է դրա օրինական տիրապետողին գույքի օգտագործման անհրաժեշտությունը վերանալու և գույքը վերադարձնելու հնարավորություն առաջանալու դեպքում, սակայն ոչուշ, քան ռազմական դրության գործողության դադարեցումից հետո՝ 45-րդ օրը: Այն դեպքում, երբ հայտնի չէ օրինական տիրապետողը, ապա գույքը պահվում է ռազմական դրության գործողության դադարեցումից հետո 2 տարի, որի ընթացքում միջոցներ են ձեռնարկվում վերջինիս հայտնաբերելու ուղղությամբ: Այդ ընթացքում օրինական տիրապետողին չհայտնաբերելու դեպքում գույքը դառնում է պետության սեփականությունը»:*

Վերոնշյալ իրավակարգավորման վերաբերյալ հարկ ենք համարում կատարել հետևյալ դիտարկումները.

Նախ՝ Օրենսգրքի 179-րդ հոդվածի համաձայն՝ «*1. Տիրազուրկ է համարվում այն գույքը, որը չունի սեփականատեր, կամ որի սեփականատերն անհայտ է կամ հրաժարվել է դրա նկատմամբ սեփականության իրավունքից:*

2. Տիրազուրկ շարժական գույքի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է ձեռք բերվել սույն օրենսգրքի 179-186 հոդվածների կանոններով:

3. Տիրազուրկ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը կարող է ձեռք բերվել ձեռքբերման վաղեմության ուժով (հոդված 187): Սույն նորմը չի կիրառվում ինքնակամ կառույց հանդիսացող անշարժ գույքի նկատմամբ:

4. Տիրազուրկ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու հիմքերն ու կարգը սահմանվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով»:

Նախագծի 2-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր՝ 8.1-ին հոդվածի 15-րդ մասում սահմանվում է, որ այն դեպքում, երբ հայտնի չէ օրինական տիրապետողը, ապա գույքը պահվում է ռազմական դրության գործողության դադարեցումից հետո 2 տարի, որի ընթացքում միջոցներ են ձեռնարկվում վերջինիս հայտնաբերելու ուղղությամբ: Այդ ընթացքում օրինական տիրապետողին չհայտնաբերելու դեպքում գույքը դառնում է պետության սեփականությունը: Հիմք ընդունելով Օրենսգրքով սահմանված տիրազուրկ գույքի հասկացությունը՝ կարող ենք նշել, որ ռազմական դրության գործողության դադարումից հետո օրինական տիրապետողին չհայտնաբերելու դեպքում գույքը համարվում է տիրազուրկ գույք, քանի որ տիրազուրկ է համարվում նաև այն գույքը, որի սեփականատերն անհայտ է: Բացի այդ, Օրենսգրքով սահմանվում են տիրազուրկ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման կանոնները, սակայն դրանցում ներառված չէ Նախագծի 2-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր՝ 8.1-ին հոդվածի 15-րդ մասում նշված դեպքը: Հետևաբար, կարծում ենք, անհրաժեշտություն է առաջանումՀայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում ներառել ռազմական դրության գործողության դադարումից հետո օրինական տիրապետողին չհայտնաբերելու դեպքում գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման ընթացակարգը:

Եզրահանգում

Ամփոփելով փորձաքննության արդյունքները՝ հարկ ենք համարում նշել, որ պայմանավորված ռազմական դրության պայմաններում Կառավարության նախաձեռնությամբ գումարված արտահերթ նիստի օրակարգում Նախագծի ընդգրկված լինելու հանգամանքով և ըստ այդմ ժամանակի սղությամբ՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքների պահանջներին Նախագծի

համապատասխանության վերաբերյալ միանշանակ եզրահանգում չի կարող ներկայացվել: Միաժամանակ առաջարկում ենք ապահովել Նախագծի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքին:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԱՆԻ ՄՈՒԹԱՖՅԱՆ

Կատարողներ՝ Ն. Ներսիսյան (հեռ.՝ 011-513-248),
Մ. Մնացականյան (հեռ.՝ 011-513-248)
28.10.2020թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության մասին

Նախագծի ընդունմամբ անհրաժեշտություն է առաջանում լրացումներ կատարել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում:

Նախագծին առնչվող Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԱՆԻ ՄՈՒԹԱՖՅԱՆ

Կատարողներ՝ Ն. Ներսիսյան (հեռ.՝ 011-513-248),
Մ. Մնացականյան (հեռ.՝ 011-513-248)
28.10.2020թ.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-770-27.10.2020-ՊԻ-011/0) վերաբերյալ

Կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ) մասնագիտական փորձաքննության է ենթարկվել Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչության ֆինանսատնտեսագիտական փորձաքննության բաժնում:

Ֆինանսատնտեսագիտական փորձաքննության արդյունքները

1. Նախագծով առաջարկվում է սահմանել համապատասխան կարգավորումներ ռազմական դրության ընթացքում անձանց գույքի օգտագործման անհրաժեշտություն առաջանալու պարագայում դրանք օգտագործման վերցնելու, ինչպես նաև օգտագործված գույքի փոխհատուցումն ապահովելու համար:

Նախագիծը ֆինանսատնտեսագիտական հիմնախնդիրներ չի պարունակում:

2. Նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան:

Եզրահանգում

Նախագիծը ֆինանսատնտեսական հիմնահարցերի տեսանկյունից լրամշակման կարիք չի զգում:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԱՐԹՈՒՐ ԹԱՍԱՉՅԱՆ

Կատարող՝ Գ. Կիրակոսյան (հեռ.՝ 011 513-603)

28.10.2020թ.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-770-27.10.2020-ՊԻ-011/0) վերաբերյալ

Կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ) մասնագիտական փորձաքննության է ենթարկվել Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչության սոցիալ, կրթական, առողջապահական փորձաքննության բաժնում:

Սոցիալական փորձաքննության արդյունքները

1. Ներկայացված Նախագծով առաջարկվում է «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքում ներառել համապատասխան կարգավորումներ ռազմական դրության ընթացքում անձանց գույքի օգտագործման անհրաժեշտություն առաջանալու պարագայում այդպիսիք օգտագործման վերցնելու, ինչպես նաև օգտագործված գույքի փոխհատուցումն ապահովելու համար:

2. Նախագիծը սոցիալ, կրթական, առողջապահական բնույթի հիմնախնդիրներ չի պարունակում:

3. Նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան:

Եզրահանգում

Նախագիծը սոցիալ, կրթական և առողջապահական հիմնախնդիրների տեսանկյունից լրամշակման կարիք չի զգում::

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ, ԿՐԹԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Կատարող՝ Ա. Գալստյան (հեռ.՝ 011-513-235)

28.10.2020թ.